Ի մահն Սամփսոնի :

Անյաղթ ախոյեան քաջ եբրայեցին
Յաղթող անթըլփատ այլազգեաց տոհմին ,
Որ այնչափ հարուածս հասոյց 'ի նոսին
Եւ բարձ ըզԳազայ ըզդուրս ըստ անձին :
Խաւարեալ յաչաց , գերեալ 'ի կապան ,
Ի ծաղր արհամարհ 'ի տուն դագոնեան ,
Սակայն և անդէն սիրան արիական
Պարտէ վըէժխընդիր ըզբախտ իւր դաժան :
Զոտսըն կորովի պընդեալ 'ի գետին
Զըգէ յաղթ բազկօք ըզսիւնս երկոսին .
Անկանին տապալ , 'ի ներքոյ բեռին
Ճըմլեալ զայլազգեաց բազմամբոխ խուժան .
Ճըմլի և Սամփսոն , վըշտացեալ միայն
Զի զսարսափ նոցին չետես 'ի մահուան :

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Աշխարհիս վրայ եղած ամենէն երևելի Սիւներուն չափերը :

| ԱՆՈՒՆ | ՍՏՈՐԻՆ ՏՐԱՄԱԳԻԾ | ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ |
|---|---|---|
| Լօնտրայի Սիւն | 4մետր 57 | 61մետր 61 |
| Նաբոլէոնի Սիւն 'ի Պուլօննը | 4մ , 15 | 53մ , 60 |
| Աղեքսանդրեան Սիւն 'ի Բեդրպուրկ | 3մ , 43 | 47մ , 00 |
| Անտոնինեան Սիւն 'ի Հռոմ | 3մ , 57 | 44մ , 82 |
| Աւստէրլիցի Սիւն 'ի Բարիզ | 3մ , 67 | 44մ , 17 |
| Տրայանեան Սիւն 'ի Հռոմ | 3մ , 63 | 43մ , 70 |
| Դաշնակցական Սիւն 'ի Լօնտրա | 3մ , 53 | 41մ , 25 |
| Յուլիսեան Սիւն 'ի Բարիզ | 3մ , 60 | 50մ , 00 |
| Տէ Մետիչիս Սիւն 'ի Բարիզ | 2մ , 92 | 32մ , 48 |
| Նաբոլէոնեան Սիւն 'ի Գօրսիգա | 2մ , 45 | 32մ , 48 |
| Գահոյից Սիւն 'ի Բարիզ | 3մ , 29 | 30մ , 53 |
| Պոմպէի Սիւն յԱղեքսանդրիա Եգիպտոսի | 2մ , 65 | 28մ , 75 |

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

### Ջրէ ուրագ :

Ա՛ռ ապակի խողովակ մը ութ բթաչափ երկայնութեամբ և ինը գծաչափ տրամագծով, որուն մէկ ծայրը գոց ըլլայ , և մէկալ ծայրը հաւկթաձև ուռած և ամենանեղ խողովակով մը վերջացած : Ասոր վեցերորդ մասը այն նեղ ծակէն ջրով լեցու , և մնացած տեղւոյն օդն ալ դատարկէ օդահան մեքենայով , և այն նեղ բերանը մէկէն ճրագի բոցով գոցէ : Թէ որ լաւ կերպով կրցեր ես դատարկել օդը , երբոր այս խողովակը հորիզոնաբար բռնես և յանկարծ յանկարծ ուղղահայեաց դրքով դարձընես՝ հաւկթաձև ուռեցքը դէպ 'ի վար , պղտի ուրագի ձայն կը լսես , և միանգամայն պղտի ցընցմունք մը : — Թէ որ ջրին տեղ սնդիկ լեցընես , ձայնը աւելի ուժով կ'ըլլայ . և թէ որ սնդիկը զուտ ըլլայ և օդը լաւ պարպուած , շիշին մէջ մութ տեղ լուսաւոր հետք մը կը ձգէ :